էր նաև միաբարների ուխտի մէջ ընդունելութեան երդման բանաձեւ եւ տարազը հագցնելու աղօթք։ Բռնեցին գրաւոր ևս մաքառել է Հայոց դէմ, մեղադրելով տան և լինն կէտով (*)։ Միաբարութեան գործին աջակցում էր նաև Զաքարիա Ծործորեցին, որին Բարդողիմէոսը իւր Քարոզգրքի յիշատակարանի մէջ անուանում է «հրամանակատար և անդրդուելի գործակից միաբանութեան.» (**). Նաև մի ամբողջ խումբ լատին կրօնաւորների ուղարկուած էր Հայաստան քարոզութեան համար։

Այս համառօտ տեսութիւնն լինքնին պարզում է, թէ ի՛նչպիսի ծանր վտանգի առաջ էին կանգնած աբեւելեան վարդապետները, յատկապէս Սիւնեաց եպիսկոպոսութեան և Գլաձորի դպրոցի ղեկավարները, որոնց աշակերտների մէջ էլ սկսել էր խմորումը, հրապուրելով Բարդուղիմէոսի և նորա ընկերների գիտութեան արտաքին փայլից և քարոզութիւնից։ Բնականաբար, հակառակորդների գործունէութեան դէմ համապատասխան պայքար պիտի սկսուէր հայ եկեղեցու գիտութեան ներկայացուցիչների կողմից նչեցու գլխաւորութեամբ։ Մեր ձեռքն է հասել նորա մի շրջաբերական թուղթը, ուղղուած «(հո)յակապ և հռչակաւոր. քաղաքացդ և բնակչաց... (բաց՝ տեղի անունը), տէրանց և ծառայից, արանց և կանանց, մեծաց և փոքունց, առհասարակ. բլրմանց, յառաջաւոր բարեբարէն և յամենասքեղծ արբչ.էն ահուեի. ձեզ եւ խնամք, քաղցրուի. առաջասցի. և ի նուաստ ևսայեայ աղօթք առ Աճ, պհլ. զձեզ ի կմս. իւր և ի հաճոյս, և մաքուր յամ. բասրելի կրից և ի վրիպակ խոտորմանց ճշմարտութէն.»։

Արդէն հասցէի վերջին խօսքերից երևում է, թէ ի՛նչ բովանդակութիւն պիտի ունենայ թուղթը. ամբիծ հաւատք է պէտք, իսկ կամակոր չաւղով ընթացողները սրտով թիւր և մտքով խոտոր, բազմատեսակ պատճառներ են հիւսում պարզ մարդկանց պատրելու համար։ Ձեզանից ոմանք, «սիրդց. զսուտս նուն գիտութէ., աւտրցել. ի սբ. հարցն կրօնից, օտարաբար խորհին», ուստի և յորդորում է ամէն մարդու չհաւատալ, որոնք աշխատում են թիւրել Լուսաւորչից ընդունած ճշմարտութիւնը։ Այստեղ նա համաոտ տալիս է Հայոց եկեղեցու դաւանութիւնը և ապաչարունակում զգուշացնող խրատներով. չար և անիմաստ մարդիկ չրջուն են ձեր մէջ և հակառակ առաքելական կանոնների «զպնդութի. պհց. լուծանեն ի ձուկն և ի գինի»։ Եթէ ֆռանգներից, ասորիներից կամ հոռոմներից ձեզ մօտ վարդապետ կը գայ կամ քահանայ կամ աշխարհական, պատուով կ'ընդունէք «իբրև զեղբարս և զծառայակիցս ի քս.». բայց եթէ հակառակութեամբ կը գան և կը կամենան ձեզ դարձնել սուբբ հայրերի աւանդութիւնից, նրանց չ'ընդունէք իբր Քրիստոսի աշակերտների, «այլ իբրեւ օցտող քի. եկղցոյն. եւ հկակրդ. ճշմարտութէ. եւ գայլս ծածկել. ստևով գառննոյ»։ Նոյնպէս ձեզանից նրանց, որոնք իրենց եկեղեցին ու առաջնորդները կը թողնեն և կ'երթան հակառակորդների մօտ, և անդուռն բերանով հայհոյել կը սկսեն «զկրօնս Հայաստանց., զեպս. և զերէց... մի ընդունիցէք զնս. ի տունս ձեր»։

Ապա աւելացնում է, հայոց կրօնը և աւանդութիւնները աննշան մարդկանց ներմուծութիւններ չեն, այլ առաքեալներից և սուբբ հայրերից հաստատուած։ Հին եկեղեցիներն էլ Մննդեան և Յայտնութեան տօները յունուարի վեցին էին կատարում և բաժակն՝ անապական, յատկապէս Հռոմայ եկեղեցին, որ յունուարի վեցի աւանդութիւնը փոխեց միայն Ննորիոս և Արկադիոս լինքնակալների հրամանով։ Դրիգոր աստուածաբանի և Կիւրղի Պարապմանց վկայութիւններով հաստատում է մարդեղութեան «մի է բնուի. բանին Աստուծոյ մարմնացելոյ» բանաձևը ընդդէմ երկու բնութիւն քարոզողների։ Տիրատուր վարդապետից լսել է, որ ֆռանգ վարդապետները եկել են «ի տրամաբանութի. հետ վրպ.ին», յատկապէս «ասցլ. էր տր. Բարդողիմէոսն, թէ Ռս. զմդկայինն. բնուի. անբժնլի. էուի.(?), թէ զբանկն. էուին. կու ասեն անձն և զայն ոչ առլ. կամ ասցլ. են թէ զբանկնուի. էուի. չէ առեալ», որ ևսային նոյնացնում է Ապողինար Լաւոդիկեացու վարդապետութեան հետ (*)։

Այս միևնոյն չրջաբերականը որոշ փոփոխութիւններով և յաւելումներով ուղղուած է Մատթէոս աբեղայի Աստուածաչունչ գրել տուեց։

(*) Ձեռ. Էջմ. № 1364/1361, 340բ. և 341բ.։ Նաև № 717, 54բ.։

(**) Տաթևի № 84 ձեռագրի, նաև Ձեռ. Էջմ. № 3011 և № 4025, համեմատ. «ի խնդրոյ... և ի հարկեցուցիչ հրամանէ արհիական գլխոյն և մեծ վիտապետին (ան.) Զաքարե(այ)ի սպասաւորի սբ. առաքելոյն Թադէի» թարգմանուել է «Նախադրութի. մեկնութեն. որ ըստ աւետարանի ցոհան» «ի լատին(աց)ւոց ի մերս բարբառ, աշխատութ. յոքնահանճար բարեբնոյն Ցրոպոնց կոչեցելոյ և սպասաւորութ. նուաստ բանի սպասաւորի Իսրայէլի»։ Այս Իսրայէլն էլ անկասկած, ցանկի մէջ յիշուած Իսրայէլ Արտազեցին է։

(*) Ձեռ. Էջմ. № 524/573, 316ա.։

(**) Ձեռ. Էջմ. № 2776, 234ա.։ Շատ հետաքրքրական են ազգագրութեան և ԺԴ. դարի բարքերին վերաբերեալ տեղեկութիւնները։